



Հայկական գիտահետազոտական հանգույց Armenian Research & Academic Repository



Սույն աշխատանքն արտոնագրված է «Ստեղծագործական համայնքներ
ոչ առևտրային իրավասություն 3.0» արտոնագրով

This work is licensed under a Creative Commons Attribution-NonComercial
3.0 Unported (CC BY-NC 3.0) license.

Դու կարող ես.

պատճենել և տարածել նյութը ցանկացած ձևաչափով կամ կրիչով
ձևափոխել կամ օգտագործել առկա նյութը ստեղծելու համար նորը

You are free to:

Share — copy and redistribute the material in any medium or format

Adapt — remix, transform, and build upon the material

38

Ա Պ Ա Գ Ի Ե Կ Ո

3 4 4 9



Ի Կ Տ Ո Ր Հ Ա Ց

Թ ա ր դ մ ա ն ե ց

Գ Ի Ւ Ա . Գ Ե Զ . Ա Դ Ա Խ Ե Ս Ա Յ

Ե Ր Կ Բ Ո Ր Դ Տ Պ Ա Դ Ր Ո Ւ Խ Թ Ի Ւ Ն

Թ ե գ ի ս , տ պ . S. Ա ռ ա լ ի ն ե մ ն ց լ ւ

1902

891.71

7 - 87

ԳԻՒՏ Ա. ՔԱՅ. ԱՂԱՆԵՍԱՆՑԻ

Ա. Աշխատովթիւնները

1. Ազօթատեար դ. տպ. 1888 — 10
2. Կրօնի դասաղիրք ա. տ. 1889 (ապառուած) — 15
3. " " " բ. տ. գ. տպ. 1891 — 25
4. " " " գ. տպ. գ. տպ. — 25
5. Տօմար և տաճացոյ Հայոստ. Ակ. բ. տպ. 1891 — 50
6. Կարնու գալթը. պատմական անսութիւն, 1891 — 10
7. Դիւան Հայոց պատմ.թեան, զիրք Ա. Բ. 1780—
1834 Սահմակ-Մերոպիան մրցանակին արժա-
նացած 1893 — 2
8. Դիւան Հայոց պատմ. զիրք Դ. Ոիմէօն կաթողի-
կանի լիշտակարանը, կենացքութեամբ, յա-
ւելուածներով ու ժանօթութիւններով, Սահմա-
կ-Մերոպիան մրցանակին արժանացած. 1894 — 7
9. Դիւան Հայոց պատմ. զիրք Դ. Դուկաս կաթող.
1780—1800 (Ըստանկար պատմերով և լիմատիով
կոնդակով) 1899 — 4
10. Կարդ աստուածութաշտութեան Հայաստանեաց
ա. եկեղեցւ դ. տպ. 35 նկարով, 1901 — 50
11. Հրնից-նորից, հնախօս, ուղեսոր, պրակ Ա. 1900 — 30
12. Պատի օրացոց 1902 ամի, Ժամանակ. ԺԴ. տպի — 50
13. Նամակաղիրք, 1902 — 50
14. Խոցի օրացոց 1902 ամի և յաւելուած.—Առող-
ջապահական խոհարարութիւն — 15.

Ա. թարգմանութիւնները

15. Հաւատաբութիւնը ամեն արգելքների բաղթառ
է Փ. Հոփմանի 1877 — 40
16. Խաւարից գէպի լոյս. Ֆ. Հոփ. 1878. (ապա.) — 40
17. Դօն Քիշօտ լամանշեցի, Մ. Ալբ. 1878 (ապա). — 70
18. Գէորգ Թոլլիսաօն, 1879 (ապառուած) — 60

891.71

7-87

Բ. ՊՕՏԱՎԵԿԵԿ

10 NOV 2011
ԱՐԱՐԱՏ

22 JUN 2007



ՄԻ ԿՏՈՐ ՀԱՅ

ԹԱՐԳՄԱՆԵՑ

ԳԻՒՏ Ա. ՔԱՅ. ԱՂԱՆԵՍԱՆՑԻ

(Արտատապած «Լումալ» հանգիսից).

ԱՐԿՐՈՐԴԻ ՑՊԱԳ-ՇՐՋԱ-ԹԻՒ



ԹԻՖԼԻՍ

Տպարան Տ. Ռուբինեանցի

1902

23.07.2013

12,934

ANSWER TO

Дозволено цензурою, Тифлисъ, 29 Октября,
1901 г.

ՄԻԿԱՅՈՒՅՑ

(b. ՊօՏԱՊԷՄԿՈՒԹ)



Սոդեստ Թեմենտեվիչ Ալֆեվը
լւա մարդ էր. այս բանին բոլո-
րովին համաձայն էին այն
ամենքը, որոնք ճանա-
չում էին նորան և գործ
էին ունեցել նորա հետ:
Գոնէ միշտ, երբ նորա մասին խօսք էր լի-
նում, ասում էին.

Հայութիւն է, Ալօեվը լաւ մարդ է,
միայն . . . էէ . . . 'ի հարկէ . . . բայց այ-
նուամենայնիւ նա լաւ մարդ է:

Թէ իսկապէս ինչ էր հասկացւում «մի-
այն» . . . էէ. . . » անորոշ արտայայտութիւն-
ներից, ոչ մի հնար չկայ երկու խօսքսվ բա-

ցատրելու։ Աւելի դժուար է ապացուցանել այնպիսի մի ըստ երևութին հասարակ բան, ինչպէս այն փաստը, որ Ալօեվը լաւ մարդ էր։ Այս պատճառով անհրաժեշտ է պատմել գործի էութիւնը։

Այն ժամանակ, երբ ամենքը միաբերան հաստատում էին, թէ Ալօեվը լաւ մարդ է, միայն և այլն. նա քառասուն տարեկան էր։ Նա ման էր գալիս արագ, գործի տէր մարդու քայլերով, այնպիսի քայլերով, ինչպէս ման են գալիս յանձնակատարները, նամակաբերները և լրատուները, բայց նորա քայլերը մի փոքր անհաստատ էին երևում, այսինքն հենց այն յատկութիւնը, որ յատուկ է իրանց ոլժերի վերալ հաւատ չունեցող մարդոց։ Նա բարձրահասակ էր, բայց չափազանց կռացած, առաջին հայեցքից մինչև տնգամ սապատող էր կարծւում. սորա համար էլ նորա երկայն հասակը բանի տեղ չէր անցնում և մի առանձին ազգուութիւն չէր տալիս նորան։ Նա շարունակ կրում էր երկայն սև թիկնոց և ամառ ձմեռ կառավարում էր առանց վերարկուի։ Իւր այս վարժուաքը նա բացարաւմ էր կատարեալ արհամարհանքով գէալի տարերքը և երբ ամառուան շոգերին. հարցնում էին նորան, թէ չէ շոգում արգեօք, իսկ ձմե-

ռուան ցրտին՝ թէ չէ մրսում, նա միշտ միենայն պատասխանն էր տալիս.

— Դատարկ բան է։ Մարդ պէտք է վեհանձն լինի։

Բայց ինքն ըստ ինքեան հասկանալի է, որ այդ աւելի պարզ է բացատրում և մինչև անգամ այնքան պարզ, որ խօսել չարժէ այդ մասին։ Եթէ սորա վերալ աւելացնենք, որ անդրավարափիքի ստորին եզերքը գզգզուած էր, որից նա նմանում էր թաթաւոր սագին, իսկ կօշիկների կրունկները ներս էին ծռուած, արդէն Մոդէստ Ալօեվի տրտաքին տեսքի նըկարագրութեանը էլ պակաս բան չի մնալ։

Եթէ նայէիր նորան մէջքի կողմից, նա քեզ վերալ մի ահագին, ամրակազմ, թիկնաւէտ, առողջակազմ և ուժեղ մարդու տպաւորութիւն կ'գործէր, որովհետեւ բնութիւնը նորան տուել էր լայն թիկունք, բարձր ուսեր, հաստ վիզ, երկար և մեծ մեծ ձեռքեր, այդ բաւական չէր, դեռ ինքն էլ երկար սեմազեր էր թողել, որոնք իրանց կոպտութեան պատճառով ձիու մազի կեղծամին էին նմանում, որպիսին գործ են ածում դերասանները գաւառական ամենախղճուկ ներկայացումներին։ Բայց արժէր միայն առաջ վազել և նորա կերպարանքին նայել, որպէս զի իսկոյն

ակներեւ լինէր, որ Մոդեստ Ալօեվը ամենսին չէր աճեցրել այն ձիրքերը, որ բնութիւնք տուել էր իրան։ Բանից երևաց, որ նորակութքը ներս է ընկած, իսկ գէմքը, փաքքիկ քթով և բերանով, մանրիկ աշերով, գունատ, կախրնկած այտերով, որոնց նիշարութիւնը անկարող էին ծածկել անօրի, ու, ուղիղ դուրս ցցուած ծնօտամօրուքները, — այդ գէմքը պարզ արտայալում էր եթէ ոչ քաղց, գոնէ կիսասոված դրութիւն։

Այսպիսի էր Մոդէստ Ալօեվի արտաքինը. իսկ ինչ վերտբերում է նորտ ներքին յատկութիւններին, մի բան միայն կարելի էր առել առ ալժմ. որ նա լաւ մարդ էր, միայն... էէ... այլ սակայն նա լաւ մարդ էր։

Բայց ժամանակ կար, երբ Մոդէստ Ալօեվի մտաին ասում էին լոկ, թէ նա լաւ մարդ է, և ոչ մի թերութիւն չէին կացնում, պարզ ասում էին լաւ մարդ է, և վերջացաւ։ Այս այն ժամանակն էր, երբ նորամալրը կենդանի էր, մի շատ պառաւ և խիստ լարգուած կին, գնդապետի այրի, որ մինչև իւր վերջին օրը կենսաթոշակ էր ստանում, և ահա այս իսկ վերջին հանգամանքումն էր բոլոր գաղտնիքը։ Պառաւ և լարգելի կինը, գնդապետի ալրին կենսաթոշակ էր ստանում, ուստի և Մոդէստ Ալօեվը ու-

նէր բնակարան և ճաշ, — երկու բան, որպնք միանգամայն անհրաժեշտ են ամեն մի կարգին մարդուն։ Բնակարանը գտնուում էր Պետերբուրգեան կողմի մի շատ հեռաւոր մասնում և շատ վատ էր, ճաշը համեստ էր և խղճուկ, և որ ամենից անտանելի էր — թե բոլոր չորս պասերին և թէ չորեքշաբթի ուրբաթ պասուայ էր. բայց նորա ունեցած չունեցածը բնակարանն ու անունդն էր, իսկ Մոդէստ Ալօեվը պարտաւորուում էր մտածել նաև հագուստի համար։

Բայց այս խնդիրն էլ թեթևացաւնորա համար այն հանգամանքով, որ նա մի մեծ եղբայր ունէր, որը երբեմն երբեմն առնում էր նորտ համար կամ անդրավարափ, կամ բաճկոն, կամ գլխարկ և կամ կօշիկ։ Այսպիսով Մոդէստ Ալօեվը ալդ բաղտաւոր ժամանակներում վստահ կարող էր ապրել աշխարհում, ոչ մի վնաս չհասցնելով մերձաւորին. այս պատճառով նորա ծանօթները պնդում էին առանց որ և է յաւելումի, թէ նա լաւ մարդ է։

Սակայն գնդապետի պառաւ և լարգելի այրին պէտք է վաղ թէ ուշ մեռնէր, որ և վերջապէս կատարեց, և ահա իսկ և իսկ այդ ժամանակից Մոդէստ Ալօեվը պարտաւորուած էր կեանքի ասպարեզը ոտք կոխել մի կտոր

Հաց գտնելու նպատակով։ Պարզ բան է — մի կտոր հաց երկրագնդի երեսին փոքր բանակութեամբ միշտ կայ պատրաստ և ամեն մի կը տոր իր տէրը ունի, և եթէ յանկարծ հանդէս է գալիս մի նոր խնդրակ, որ առաջ կենսաթոշակով էր ոնտում, նորան ուրիշ բան չէ մնում, բայց եթէ իւր որոնած կտոր հացը ժերձաւորի ձեռքից խլել։ Այս պատճառով էլ այն խօսքերին, թէ Մոդէստ Ալօելը լաւ մարդ է, ալժմ սկսեցին զանազան պոչեր կպցնել։

Սակայն հեշտ է արդեօք հաց գտնել այն մարդու համար, որի մասին աւանդութիւնն ասում էր, թէ այսինչ ժամանակ այսինչ հաստատութեան մէջ հաստ մինչև երրորդ դասարան, իսկ որի կրթութեան շարունակութեան մասին աւանդութիւնը ամենակին ոչինչ չէր ասում... Ոչ, հեշտ չէ։ Բայց սակայն Մոդէստ Ալօելը այն կարծիքի էր, թէ մինչև մարդ ձեռք չբերէ մի կտոր հաց, ամենակին չէ կարող այն ուտել, ուստի և ոչ մի բանի ուշ չդարձնելով՝ սկսեց հաց ձեռք բերելու վերայ մտածել։

Նորա առաջին դորձն այն եղաւ, որ գնաց եղբօր մօտ։ Ղուկաս Դեմենտեվիչ Ալօելը կենում էր Լիտէյնի հրապարակի վերայ

Կիրօչնօյից ոչ հեռու, և շատ էլ լաւ չէր ապրում, բայց ոչ էլ շատ վատ։ Դանէ նա ամեն ինչ ունէր. թէ հագուստ, թէ տաք բնակարան, թէ փափուկ կարասի բնակարանում, կուշտ ճաշ, կին, որդիք, մինչդեռ Մոդէստ Ալօելը սոցանից ոչ մէկը չունէր։ Մոդէստը եկաւ եղբօր մօտ ու ասաց.

— Գիտես, Ղուկաս, որ մայրիկը մեռաւ, նորա հետ մեռաւ և կենսաթոշակը։ Ես ոչինչ չունիմ։ Իսկ դու, Ղուկաս, սեպհական աշխատութեամբդ ձեռք ես բերում թէ հաց և թէ ուրիշ ինչ որ պէտք է։ Ինձ էլ սովորցրաւ այդ արհեստը...

Ղուկասը նայեց Մոդէստին, ուշադրութեամբ և անթարթ նայեց ու ասաց.

— Տեսնում ես, Մոդէստ, ի հարկէ ամեն մարդ պէտք ունի հաց և այլ ինչ աշխատելու, ուրեմն նաև դու։ Բայց այդ արհեստը հեշտ չէ և կապուած է բազմաթիւ դժուարութիւնների հետ։ Եւ ինչպէս ես քեզ տեսնում եմ, ինձ թւում է, թէ դու անընդունակ ես այդ բանին։

— Ի՞նչպէս թէ անընդունակ։ Ինչու եմ անընդունակ։

— Ապացոյցներ չկան։ Ինքդ դատիր. ես թատերագիր եմ և կապեր ունիմ թատրոնա-

կան աշխարհի հետ։ Բայց ինչ գործի կարող եմ քեզ դնել, Մոդէստ։ Պարի համար դու պիտանացու չես, որովհետև ոտներդ մեծ մեծ են և անհաստատութիւն է նկատում նոցու մէջ։ Դերասան զինել քեզ չի կարելի, որովհետև քոլեզուդ ամենաէական չորս բաղաձայները չունի. դու չես կարող արտասանել՝ինչպէս հարկըն է ոչ լ, ոչ չ, ոչ չ և ոչ ժ... Ի՞նչ տեսակ գերասան կինես։ Ես քեզ կյանձնէի օտարազգի պիէսներ թարգմանել, որոնցից տասը տարի է ահա ինչ որ ես յաջողութեամբ օգտուամ եմ ուուսերէն ողբերգութիւններ գլեշիս, բայց դու լեզուներ վատ էիր սովորում և հազիւ թէ որ և է բան լիշես։ Արտագրելու կրտայի, բայց էլի արգելք կայ. ես ինքս էլ ճիշտ չեմ գործ դնում եաւու տադը, իսկ դու առաւել վատ... Ես միշտ այնպիսի գրագէտ արտագրող եմ որոնում, որ զիտենալ այդ... Էլ ինչ կարող եմ քեզ համար հոգալ։

Մոդէստը մտածմունքի մէջ ընկաւ. Այս ամենը ստուգ էր, նա ոչինչ չգիտէր և նա ոչինչ չէր կարող։ Այնուամենայնիւ այս խոստովանութիւնից նորա ախորդակը ամենևին շպակասեց, և երկար մտածելուց յետոյ ասաց։

— Ի՞նչպէս գիտես, բայց միայն ես քեզ մօտկմնամ, որովհետև էլ ուրիշ տեղ չունիմ...

Ինչպէս ասաց, այնպէս էլ արեց։ Ղօւկասը ուոչում էր և կնճռուում, բայց սիրուչարաւ նորան գուրս անել նախ՝ նորա համար, որ ինչ և իշէ եղբայր էր, իսկ երկրորդ էլ, որ հասարակաց կարծիք կար։

Մոդէստը ապրում էր, ալսինքն՝ քնում էր, ուտում, զբօնում և ապագալի մասին մտածում։ Նա ազատ ժամանակ շատ ունէր, ուստի և նորա մտածմունքներն էլ բարդ էին և բազմազան։

Նա մտածում էր. «Ի՞նչպէս է իմ եղբայր Ղուկասը վարպետութեամբ հաց գատում։ Ես հաւասարի գիտեմ, որ նորա գիտութիւնը իմից մի քիչ աւելի է։ Ես երբորդ դասարան հասայ, իսկ նա հինգերորդ, — մեծ բան է ինչ է։ Նա ինքն էլ հենց ասում է, որ շատ լաւ չգիտէ եաւու տառը գործ ածել։ Այն ինչ համեցէք տեսէք — պիեսներ է գրում, ներկայացնել է տալիս թատրոններում և սորա համար փող է ստանում։ Եթէ տսենք, թէ նա առանձին խելք ունի... բայց չէ, ամենեին այս բանը նորա մէջ չէ նկատուել։ Ընդհակառակը, ուսումնարանումն էլ, տանն էլ ամենքը նորան շատախօս են համարել, ինչպէս և ինձ, Մոդէստիս։ Ո՛չ, այստեղ ուղղակի մի գաղտնիք կայ և պէտք է իմանալ թէ ինչ է այդ։

Եւ Մոդէստն սկսեց քըքրել Ղուկասի այդ
գաղտնիքը: Դիցուք թէ Ղուկասը նստած էր
լինում իւր մենարանում, պարապմունքի մէջ
մտախոհ, Մոդէստն էլ տեսար կմտնէր կա-
մացուկ:

— Զէ, ոչինչ, ես քեզ չեմ խանգարի, ես
միայն թեք կընկնեմ այստեղ տախտի վերայ...
կասէր նա և թեք կընկնէր: Պարկում էր իր
համար և կարծես նայում էր առաստաղին,
բայց իսկապէս նա Ղուկասին էր նայում:
Ղուկասի հոգը շէր: Նորա առաջ դրած է
գերմաներէն մի գրքովկ. նայում է գրքին և
ինչոր գրում, կրկին նայում է և կրկին գր-
քում: «Եհէ, մտածում է Մոդէստը,—այ թէ
ինչպէս է նա պիեսներ շարադրում. պէտք է
տչքի առջև ունենալ այսա: Այսպէս նա մի
շաբաթ դիտեց, մի անգամ էլ մտաւ մենա-
րանը, երբ Ղուկասն այնտեղ չէր, մօտեցաւ
սեղանին և տեսաւ, որ գերմաներէն գրքում
գերմաներէն պիես է, իսկ տետրակում՝ ուս-
ուերէն: Գերմաներէն պիեսի վերնագիրն էր—
Սստուած դիտէ թէ ինչ, իսկ ուստերէնինը՝
«Լուսեթիւն: Գաւառական պատկերներ: Փո-
խադրութիւն»: Մոդէստը խելքն ու միտքը
լարեց և քանի մի բան լիշեց իւր ուսած
գերմաներէնից: Կարգում է և տեսնում, ուր

որ գերմաներէնում Ադոլֆ Շմիտ էր գրած: Ղուկասի տետրում իվան Պետրովիչ Շկուրին
էր. ուր որ գերմաներէնում Ղուկաս Շպայզէն
էր, Ղուկասի մօտ — Զինալիդա Սերգեևնա
Կուպիդոնով էր. ուր Շմիտն ասում էր. «գուտ-
մօրգէն», այնտեղ իվան Պետրովիչ Գօրսկին
«բարե» էր ասում. ուր որ Ղուկաս Շպայզէնը
ձայնում էր, «ի՞րէ դիհ», այնտեղ Զինալի-
դա Սերգէն նաև. «միշտ քեզ անձնուէր» էր
ասում:

«Ե՛, մտածեց Մոդէստը, ահա թէ ին-
չումն է եղել բոլոր գաղտնիքը, այ թէ ինչ
կնշանակէ պիեսներ փոխադրել: Վերցնել և
ուզզակի... թարգմանել: Հմ... Նատ հասա-
րակ մի բան: Այդ հօ ես էլ կարող եմ անել...
Հարկաւոր է միայն որ մի քիչ լեզուներ սո-
վորեմ, քիչ ու միչ լիշեմ»...

Եւ նա սկսեց եռանդով կրկնել լեզունե-
րը և քիչ ու միչ լիշել: Նայում էր նորտն-
Ղուկաս եղբայրն ու զարմանում: «միթէ սո-
րանից բան դուրս կ'գայ: Ա՛յ քեզ հրաշք.—
դեռ շտրունակ պարկած էր տախտի վերայ և
առաստաղին էր նայում, իսկ այժմ լանկարծ
անձնատուր է եղել մտաւոր պարապմունքին:
Ի՞նչպիսի մարդ է»:

Երկու ամսից լետոյ Մոդէստը իրան պատ-

քաստ զգաց: Նա գնաց գրավաճառանոց, քըր-քըրեց այնտեղ և գտաւ մի նոր, թարմ պիես, որի վերայ գրած էր իրան բոլորովին անձա-նօթ հեղինակի մի անուն: Բայց պէտք է նկատել, որ նորան տնծանօթ էր նաև միւս ըոլար հեղինակների անունները: Առաւ նա ֆրանսիական պիեսը, եկաւ տուն և նստեց նկուզում: Դուկասի զարմանքը աւելի մեծա-ցաւ. «Ի՞նչ է անում նա այնտեղ: Միթէ իրաւ երեսուն և չորս տարեկան հասակում Մո-գէստը իւելքի եկաւ և մի լուրջ գործի ձեռ-նարկեց»:

Բայց Մոդէստը շարունակ նստած էր նկուզում և միայն ճաշելու էր դուրս գալիս: Նա պարապում էր մեծ եռանդով: Ժան դը-բէֆերն ու Լուի Կավերնաները շատ հասա-քակ կերպով փոխում էին նորա մօտ Սիմէօն Պետրոսիչ Բրինկինների և Ֆէօդօր իվանիչ Կավէրզօվների: Սիւզաննին նա դարձնում էր Արին, իսկ Մարգարտին՝ Ստեփանիդ: Թարգ-մանութիւնը դուրս եկաւ ճիշտ, բառացի, եթէ չհաշուենք այն տեղերը, որոնք չհաս-կանալուց աղճատուած էին: Պիեսը վերջացած էր: Վերնագրի համար Մոդէստն ընտրեց այս առածը. «Չխաբես՝ չես ծախի», դրեց «փոխա-գրութիւն», ստորագրեց խոչոր տառերով՝ աշ-

խատասիրեց Մոդէստ Ալօել» և հրապարակ հանեց:

Երբ պիեսը նորա ձեռքից ելաւ և պատ-շաճաւոր ընթացք ստացաւ, Մոդէստը համա-րեալ հանդիսավեհ կերպարանքով բացուեց իւր եղբօր առաջ.

—Գիտես, Դուկաս, ես ոլիես հեղինա-կեցի, ասաց նա:

Դուկասը զարմանքից մի քանի քայլ լեռ ույետ գնաց:

—Դու: Հեղինակեցիր: Հա, հա, հա: Միթէ գու հեղինակելու շնորհ ունիս:

—Ինչու չունիմ: ԶԵ ո՞ր գու էլ ես շա-րագրում:

—Հմ... Հա... Բայց այդ ուրիշ բան է բոլորովին...

—Բաս լաւ... Մի քիչ սպասիր, Կը տեսնես...

Դուկասը լաւ համարեց սպասել: Պիեսը արգէն յաջողութիւն գտնելով յետ դարձուեց Մոդէստին և դարձեալ ուղարկուեց ուր հարկն էր: Կարդացին, քննեցին ու գտան, որ լի-րաւի վատ պիես չէ: Մեզ յալտնի չէ, ճշմա-րիտ վատ չէր, թէ ձեռնհաս մարդկանց թւում էր այդպէս, որովհետև շապկի վերալ Ալօելի անունը կար գրած, մի անուն, որ

յաճախ կը կնւում էր թատրոնական շքջանում։ Ս.մենքը իմանում էին, որ Մոդէստ Ալօեվը պէտք է Ղուկաս Ալօեվի եղբայրը լինէր և որ եթէ Ղուկաս Ալօեվը յաջողութեամբ փոխադրութիւններ էր անում, էլ ինչու նոյնը չէր կարող անել և Մոդէստ Ալօեվը։

Հասաւ նոյն իսկ այն օրը, երբ Ղուկասին անպատմելի զարմանք էր տիրել, տեսնելով յայտարարութեան վերայ իւր ազգանունը, որից առաջ սակայն ոչ թէ «Ղուկաս» էր գրուած, այլ «Մոդէստ»։

— Սատանան գիտէ թէ այս ինչ բան է, ասաց նա բարձր ձայնով։ — Ճարահատեալ պէտք է հաւատալ, որ Մոդէստի վերայ շընորհ է իշել։

Պիեսը լաւ գնաց, հասարակութիւնը ծափահարեց, քննադատները գովարանեցին, տնօրէնները մէկ մէկու ձեռքից խլում էին, Մոդէստը լաւ սիրուն գրանն էր ժողովում ներկայացումների վարձը։ Մի խօսքով գործը այնպէս փառաւոր էր գնում, որ Մոդէստը չէր էլ երազել։ Նա կարծում էր թէ իրան մի չնչին բան կհասնի, իսկ լանկարծ, արի տես, բորբքը հեղեղի պէս սկսաւ թափուիլ նորա տռաջը։ Ղուկասն անգամ սկսաւ նորան նտիսանձել։

— Այս տեսակ յաջողութիւն աչքով էլ

չեմ տեսել երբէք, չնայելով որ տիտքան փառ ձուած եմ այս գործում։ Մի կտոր հաց ունիմ, ով գիտէ այն էլ խլես իմ ձեռքից...

Բայց Մոդէստը առատօրէն վայելում էր փառքի ու բարիքի շնորհները, փոխադրուեցաւ մի առանձին բնակրան, իւր սեպհականը, էլ ոչինչ չէր ուզում իմանալ և լսել։ Նա գնաց գրավաճառանոց և մկանց մի նոր պիես որոնել, որպէս զի նորա տակն էլ ըստորագրէ «աշխատավիրեց Մոդէստ Ալօեվ»։ Բայց այդ միջոցին մի դէպք պատահեց, որ ցնցեց նախ և առաջ Ղուկասին, ապա Մոդէստին ու վերջի վերջոյ սորա փառքն ու բարեկեցութիւնը վտանգի ենթարկեց։

« Մի անգամ եկաւ Մոդէստի մօտ Ղուկասը խիստ յուզուած կերպարանքով և, անխօս՝ գրպանից հանելով լրագրի մի թերթ, տուեց եղբօրը և կտտազի կերպով առաց։

Կարդա.

Մոդէստն սկսեց կտրդալ։ Կրագրում հետեւալն էր գրած, «Մօտ օրերս լոյս է ընկել մեղսնում մի նորագոյն թատերագիր Մոդէստ Ալօեվ անունով։ Մենք միշտ այն կարծիքի էինք, որ օտար պիեսները ռուսական բարբէրին յարմարեցնելու համար բաւական է միայն Ղուկաս Ալօեվը։ Այնուամենայնիւ



մենք ծափահարում էինք «Զիտըես՝ չես ծախի» և հեղինակին, որովհետեւ պիեսը տաղանդաւոր և հետաքրքրական էր թւում։ Բայց ինչքան մեծ եղաւ մեր զարմանքը, երբ իմացանք, որ այս պիեսը, որը Մոդէստ Ալօեվի ստորագրութիւնն է կրում, բառացի, այն էլ շատ խայտառակ թարգմանութիւնն է Փրանսիական թատերագրի պիեսի (այստեղ լիշուած էր ինչպէս թատերագրի անունը, այնպէս էլ պիեսի)։ Նատ երեղիթների ականատես էինք եղել, բայց այսպիսի անամօթ գողութիւն կարծում ենք դեռ չէ պատահել գրականութեան մէջ։ Շնորհաւորում ենք Ղուկաս և Մոդէստ Ալօեվ եղբայրներին և ցանկանում ենք նոցայաջողութիւն այսուհետեւ ես, բայց խորհուրդ ենք տալիս թատրոնական վարչութեան շրտով հանել այդ գրուածքը պիեսների շարքից, որովհետեւ անվայել է մայրաքաղաքի բեմի վերայ տեսնել պարզ խաբեբալութիւն...»

— Դու անասուն ես և լիմար։ Աւելի ոչինչ. մեծաբան խօսքերով ասաց Ղուկասը։ — Ինքդ ընկար և իմ անունն էլ արատաւորեցիր։

Մոդէստը նայեց նորան և աչքերը յատեց։

— Այդ բոլորից ես բան չեմ հասկանում, պարզասրտութեամբ ասաց նա։

— Ինչպէս չես հասկանում։ Զէ որ սա

ճշմարիտ է։ Դու թարգմանել ես և գրել, որ քո հեղինակութիւնն է... այդպէս չէ։

— Բոլորովին ճշմարիտ է։

— Ե՛, այդպիսի բան կանեն։

— Ի՞նչպէս չեն անի, անում են։ Զէ որ դու էլ նոյնն ես անում, և ուրիշ ոչինչ... ինչո՞ւ ես չեմ կարող անել։

— Որովհետեւ դու լիմար ես... Ահա թէ ինչու... Միթէ ես թարգմանում եմ։ Ես յարմարացնում եմ ոռւսաց բարքերին, հասկանում ես։ Իմ գրուածքներից երբէք չի կարելի իմանալ, թէ որտեղից եմ ես գողացել. Հինգ սորանումն էլ կայանում է արուեստն ու ստեղծական շնորհը... Հասկացար։ Իսկ դու, ապուշ, վերցրել ես և թարգմանել և կարծել ես, թէ այդպէս էլ պէտք է...»

Մոդէստը սկսաւ քիչ շատ հասկանալ, թէ ինչումն է տարբերութիւնը, — Բայց ի՞նչպէս անեմ, հարցրեց նա, երբ տեսաւ, որ լիրաւի խայտառակ բան է։

— Ինչպէս կամենաս այնպէս արա, իսկ ես էլ չեմ ուզում քեզ ճանաչել։ Դու իմ գըլուխս կտրեցիր, պատասխանեց Ղուկասը։ Միայն այս մէկ բանը աչքի առաջ ունեցիր, իսկոյնեւթ մի որ և է լրագրում պատասխան տպիր, թէ լիրաւի նմանութիւնը կայ, բայց

դա լոկ գաղափարների զուգադիպութիւն է Սւելտցրու, որ դու քո պիեսը գրել ես և բարեկամներիդ ու յարգողներիդ մօտ կարդացել տասն տարի առաջ, մինչդեռ Փրանսիական հեղինակը իւր գրուածքը լոյս է ընծայել միայն անցեալ տարի; Նկատիր, որ չե՞ր կարող արդեօք նա քեզանից փոխ առնել... ծեսնալիք, չը խառնես, ապուշ: Իսկ այնուշետե մնաս բարեաւ և երբէք աչքիս չերևաս: Ես քեզ էլ ամեննեին չեմ ուզում ճանաչել: Հասկանում ես: Ամեննեին:

Սիս նշանաւոր խօսքերն ասելուց յետոց Ղուկասը, որին Մոդէստը միշտ մի բարեհօգի մարդ էր համարում, աչքերը գաղանի նման չուց, ատամները կրծտացը գալի պէս և դուրս գնաց:

«Հմ..., մտածեց Մոդէստը, երեք թէ ես էլ իրաւի մի չարիք եմ գործել, որ Ղուկասն էլ ալսպէս գաղանի պէս է նալում:

Նա հետեւց եղբօր խորհրդին և լրագըներից մէկի մէջ մի նամակ տպեց, որի մէջ ասուած է կէտ առ կէտ ալն, ինչ որ Ղուկասն ասաց, այն է թէ՝ դա լոկ գաղափարների զուգադիպութիւն է: Պիեսը գրուած էր և բարեկամների ու յարգողների մօտ կարդացուած քսան տարի առաջ (տեսի համոզելու

համար Մոդէստը տասը տարի էլ իրանից առելացրեց) և ի հարկէ տւելի շուտով Փրանսիացի հեղինակը կարող էր գողանալ Մոդէստից, քան հակառակը Յալտնի չէ ով և իցէ հաւատաց այս բացատրութեան, բայց շատերը ցոյց էին տալիս. թէ հաւատացել են, իսկ մընացեալները շուտով մոռացան այս պատմութիւնը: Սակայն պիեսը էլ չերեկեցաւ թատրոնի վերալ, Մոդէստը էլ չէր ստանում ներկայացման վարձը և նորա գրութիւնը աննախանձելի էր գասնում:

Եղբօր մօտ գնալ նա սիրտ չէր անում, միշելով, թէ ինչպէս նա իւր վերջին ալցելութեան ժամանակ ատամներն էր կրծտացնում: Նա ուղղակի վախենում էր, որ Ղուկասը, առողջ և ուժեղ լինելով, չծեծէր իրան: Մոդէստը փորձեց մի պիես էլ թխել, այս անդամ արդէն Ղուկասի հրահանգով, այսինքն «մշակուած»: Պիեսը պատրաստ էր և կարծես վատ չէր: Վերջապէս Մոդէստը գնաց իւր ծանօթ թատրոնական տնօրէնների մօտ և առաջարկութիւն արեց, բայց նոքա ականջ էլ չդրին:

— Ես ձեզ հաւատացնում եմ, որ այս պիեսը գրած է ինչպէս հարկն է... սա իմ

հեղինակութիւնն է, միայն նիւթն է փոխառած... համոզում էր նա:

— Այդ բանում կասկած լինել չի կարող, պատասխանեցին նորան: — Միայն... դարձեալ... ոչ, ոչ, ոչ մի կերպ:

Եւ այսպէս նորան չլաջողեց պիեսը ընդունել տալ: Ահա այս տխուր միջադէպից յետոյ էր, որ սկսեցին Մոդէստի մասին ասել, թէ նա լաւ մարդ է, միայն... և ալլն:

Մոդէստը ինչքան աշխատեց, ոչինչ չը կարողացաւ անել: Ամենքը ժպտում էին նորան, թօթուում էին նորա ձեռքը, ասում էին, թէ հաւատում են նորա անմեղութեանը, բայց պիեսն ընդունել չէին ուզում: «Գուցէ իրաւի ինքն է հեղինակել, մտածում էին տնօրէնները, մի շատ գժուար բան հօ չէ, քիչ մարդ կայ որ պիես է գրում: Բայց վայ թէ յանկարծ երևայ, որ նա գարձեալ... Ոչ, թող իր բանին գնալ: Ինքը Մոդէստ Ալօեվը ի հարկէ լաւ մարդ է, միայն... հմ... Զի, Աստուած բարի տալ իրան...»

Մոդէստի աննախանձելի գրութիւնը կրի-
տիքական դառաւ: ճաշել էլի մի կերպ կա-
րողանում էր, որովհետեւ գաւառներից, ուր-
այնքան էլ չէ հետաքրքրում պիեսների հա-
րազատութիւնը, երբեմն երբեմն ուղարկում

էին նորան ութնական ոռոքվի, բայց նորա անդրավարտիքը էլ ամենակին բանի պէտք չէր և նա միանգամայն միջոց չունէր նորոգել: Փորձեց Մոսկվա երեալ, բայց այնտեղ, հէնց որ իմացան, թէ Մոդէստ Ալօեվն է, ամենքն էլ սկսեցին ծաղրել:

Ա, հա, հա, հա: Մոդէստ Ալօեվ: Դա հէնց այն մարդն է որ առանց խաբելու չէ ծախում: Հա, հա, հա...

Մոդէստն ականջները խցեց և փախաւ քաղաքի ամենահեռաւոր ծալրը: Նա յետին յուսահատութեան մէջ էր: Նա մտածում էր. «Ինչի՞ համար: Ինչի՞ համար են հալածում ինձ: Կարծեմ ես ոչ ոքի վիրաւորելու միտք չունիմ և ոչ ոքից էլ բան խլել: Ես միայն ուզում եմ մի կտոր հաց գտնել և ուրիշ ոչինչ... Ես ինչո՞վ եմ ուրիշներից պակաս և ինչո՞ւ ուրիշներին կարելի է, իսկ ինձ չի կա-
րելի մի կտոր հաց վաստակել: Օրինակ հէնց իմ եղբայր Աստիքսը: Նա էլ ինձպէս չգիտէ թէ ուր պէտք է դնել եատ տառը, և միայն մշակել զիտէ, իսկ ես այդ չգիտէի, ահա ամբողջ տարբերութիւնը իմ ու նորա մէջ... Ախ, ախ: Ուր է արդարութիւնը:

Եւ այն միջոցին, երբ Մոդէստը խորին յուսահատութեան մէջ էր ընկղմուած, լան-

Կարծ մի մեծ միտք ծագեց նորա մէջ.

— Գաւառում: Գաւառում, գոռաց նորողը ուժով, և ուրախութիւնից մինչեւ անգամ թաշկուտաց, որ այս միտքը ծագեց նորա մէջ. «Ել բնէ էի երկար մտածում: Մալրաքաղաքներն ինձ չգնահատեցին... Ա՛յս հըպարտ, գոռող մալրաքաղաքներ: Նոքա վազուց հրաժարուել են ինձ կերակրելուց. իսկ գաւառը, ոչոչ, էլի նա է ինձ մտաբերում և ութն ութելու ծանուցագիր զըկում: Ոչ բարի, սիրելի՞ գաւառ: Բայց ո՞ր կողմը: Ո՞ր քադքը գնամ: Բայց այդ միւնոյն է, բոլոր քաղաքները միապէս բարի են և պարզահոգի: Օն անդք ուրեմն դէպի գաւառ:

Եւ Մոդեստը շոգեկառք նստեց ու գնաց: Զգիտեմ ինչու և ինչպէս նա ընկաւ նահանգական Կօզօդոյ քաղաքը և ոտք կոխեց ալնաեղ կեանքի մի նոր ասպարէզ:

Նահանգական Կօզօդոյ քաղաքում, ինչպէս և ամեն մի ուրիշ փոքր իշատէ իւր լարդը ճանաչող նահանգական քաղաքում ի հարկէ գրամատիքական արուեստը սիրողների շըջան կար: Բայց, — այս էլ ի հարկէ, — ոչ մի կարէ չկար այնտեղ: Սիրողները գործում էին իւրաքանչիւրն իւր խելքի կտրածի պէս. այս պատճառով ոչինչ չէր դուրս գալիս և

ամեն ինչ գոյութիւն ունէր ալնտեղ, բացի գրամատիքական արուեստից: Սիրողներն զգում էին ու հասկանում, որ դա տղեղ բան է, բայց ոչինչ չէին կարողանում անել, որովհետեւ գլխաւոր չունէին, որին նոքա աւելի յարգէին, քան իրանց կամտկորութիւնները: Կարելի է երևակայել թէ ինչքան մեծ էր նոցա ուրախութիւնը, երբ իմացուեց, որ քադքը մի մարդ է եկել, Ալօեվ ազգանունով, — մի ազգ, որ ալնքան յաճախ հանդիպել էր թատրոնական աֆիշների վերաբւ նոքա ՚ի հարկէ չէին քըքրում և չէին էլ ցանկանում քըքրել թէ բանն ինչումն էր, և հէնց որ տեղական լրագրում մի լուր երևեցաւ, թէ եկել է այդ քաղաքը «մեր յալտնի թատերագիր Ալօեվը», այդ միւնոյն օրը մի պատգամաւորութիւն ժողովարանի կողմից առաջարկեց նորան բեմի տնօրէնի պաշտօնը:

Մոդեստը սկզբում զարմացաւ, բայց լետոյ գլուխը վեր բարձրացրեց: Նորան շատ էլ բարեյացնդ հանգամանք չէր թւում, որ իւր անդրավարտիքը շատ վատ վիճակի մէջ էր, իսկ կօշիկները ծռուած, բայց ի նկատի առնելով իւր անուան թովչութիւնը, որ միւնոյն ժամանակ իւր եղբօր անունն էլ էր, նա որոշեց թքել այս հանգամանքի վերաբւ:

Նա գնաց ժողովարան և մի ճառ խօսեց արուեստի վեհութեան և սրբութեան մասին, որին, ասաց, «մենք ամենքս ծառայում ենք», որպիսի ճառի հազիւ երրորդ մասը հասկացուեց, որովհետև, ինչպէս գիտենք, Մոդէսը չէր կարող ինչպէս հարկն է արտասանել ուստաց ալբուրենի չորս ամենաէական բաղաձայն տառերը։ Սակայն ժողովարանի անդամները հիացած էին և բուռն ծափահարութիւններ նուիրեցին նորան։

Այնուհետև Մոդէսը ձեռնարկեց ըեմի անօրէնութիւնը։

Նա առաջարկեց ներկայացնել «Զիսաբեռ» չես ծախիւ պիեսը և ներկայացնել տուեց, որովհետև անհնարին ոչինչ չկար ալգուեզ։ Սիրողները լաւ չներկայացրին, Մոդէստի անօրինութիւնը զգուելի էր, որովհետև ոչինչ հասկացողութիւն չունէր այդ արուեստից, բայց ամենքը լաւ էին արամադրուած, իսկ ժողովարանի նպատակն ու ցանկութիւնն էլ այս էր։ Այսպիսով ամենքը գոհ էին իրանցից և իրանց անօրէնից։

Այս անսպասելի լաջողութիւնը կարճ ժամանակ միայն տեսեց Մոդէստի համար։ «Այս բոլորը լաւ է։ Նատ էլ հաճելի է, երբ քեզը ընդունում են ինչ որ իսկապէս դու չես, դորա-

համար էլ յարգում են։ Սակայն այդ յարգանքով վարժիկ չի առնուի։ Այսպէս էր դատում Մոդէստը և շատ էլ իրաւացի էր։ Սիրողներն ի հարկէ ոչինչ չէին վճարում նորան տնօրէնի պաշտօնի համար։ Նախ և առաջ ժողովարանը փող չունէր, ինչպէս և սիրողների ամեն մի ժողովարան, իսկ երկրորդ՝ ամենքը հաստատ համոզուած էին, որ աՓիշների վերայ ալգան յաճախ երևացող յայտնի թատերագիրը, ինչպիսին Ալօեվն էր, չէր կարող փողի կարիք ունենալ։

Նոքա հարկաւ նորա հագուստը և ամբողջ արտաքինը դորան հակառակ տպացուց էին համարում։ Բայց այս բացատրում էր ուղղակի ինքնուրոյն սովորութեամբ։ Կօզօդոյ նահանգական քաղաքում կարծիք կար տարածուած, թէ գրականութեամբ պարապող ները սովորաբար ման են գալիս գջլոււած, չսանդրուած և անլուալ։ — մի կարծիք, որ վաղուց արդէն չքացել էր ուրիշ ամեն տեղերում, բայց կօզօդոյում դեռ գոյութիւն ունէր։ Այս ամենի շնորհիւ Մոդէստը, լաջողութեան մէջ թաղուած, միենոյն ժամանակ սոռված էր։ Ելի մի կերպ տպառում էր, երբ իւր պիեսի կրկնութիւնները տեղի ունէին։ Փողովարանի բոլոր մարդիկ փողատէր էին և ու-

ոչինչ գարմանալու բան չկայ, որ նա պատ-
րաստ է՝ նոյն խոկ պրօֆեսոր դառնալ:

Իսկ եթէ այս էլ չլինի՝ Մոդէստի մտած-
մունքը հիմնաւոր էր: Կան այնպիսի գիտու-
թիւններ, — իսկ գուցէ գոքա գիտութիւններ
էլ չեն, — կամ արուեստներ, — և գուցէ գոքա
արուեստներ էլ չեն, — ով գիտէ թէ ինչ բան
են, — որոնց մէջ կարելի է պրօֆեսոր լինել
և դասաւանդել, առանց մի բան գիտենալու
և կտրողանալու: Այդ տեսակ ձիւզերից մէկն
էր ընտրել և Մոդէստը:

Մի անգամ նա գնաց ժողովարանի նիս-
տին և լայտնեց, թէ ցանկանում է ճառ խօ-
սել: Այս գէպքերը միշտ աւելի հետաքրքրա-
կան են լինում և ամենքն ականջները սրե-
ցին: Մոդէստը վերկացաւ և ասաց.

«Ճիկիննեզ և պարոններ: Կարճ ժամա-
նակ ապրելով ձեր մէջ ես կարողացայ համո-
գութիւն, որ ձեր մէջ բեմական բազմաթիւ պա-
տուական տաղանդներ կան: (Ունկնդիրներն
աւելի մրեցին ականջները): Մանաւանդ ես
այս նկատել եմ իմ «Զխաբես» չես ծախի»
պիեսի ներկայացման ժամանակ: Սակայն 'ի
մեծ ցաւ իմ սրտի պէտք է ասեմ, որ այս
պատուական տաղանդները անհետ կկորչեն,
եթէ նոյն պատշաճապէս չմշակեն: Ի գուրք չէ

տել խմելու սիրողներ, Միջոցներում որևէ
մէկի հաշուով անպատճառ օղի և նախաճաշ
էր առնեում, որից առաջին ճաշակն ի հարկէ
առնում էր տնօքէնը: Սակայն կրկնութիւն-
ները շուտով վերջացաւ և այնուհետեւ սկսուե-
ցաւ կատարեալ սովոր ժամանակ:

Ոչ մի կասկած չկայ, որ մարդկութիւնը
շատ նշանաւոր գաղափարներով պարտական
է քաղցին: Այս վերջինների և գատարկ ստամոք-
սի մէջ մի գաղտնի կապ կալ, և թէպէտ այն
գաղափարը, որ լղացաւ Մոդէստը իւր այս
քաղցածութեան օրերում, ամենելին քբարւո-
քեց մարդկութեան վիճակը, այնուամենայնիւ
սա մի գարմանալի գաղափար էր:

— Ինչու ես... հմ... պրօֆեսոր չդառ-
նամ, հա՞ գոչեց նա և ամենելին չապշեցրին
իրան իւր այս սեպհական խօսքերը: Առաջին
նուագ սա մի փոքր խօրթ կթուալ: Ի՞նչպէս
կարող էր Մոդէստը, որ որևէ գպրացի հազիւ
երբորդ գասարան էր հանել և որ չէր կա-
րողանում եւալ տառը իւր տեղը գործ ածել,
պրօֆեսորութեան մասին մտածել: Բայց
պէտք է ի նկատի առնել, որ Մոդէստը ոտ-
ված էր, իսկ երբ մարդ սոված է, և այն էլ
տեսողաբար, և ապագայումն էլ ճաշելու ոչ
մի հնարաւորութիւն չէ տեսնում, արդարեւ

մեծ մարդը ասել (բայց ո՞րը, Աստուած վկայ-
չգիտեմ, մտածում էր նա այդ միջոցին). Հան-
ճարը—աշխատանքն է, Մենք այս կարող
ենք և տաղանդի համար ասել, տաղանդը
ոչինչ է առանց պատշաճաւոր մշակութեան:
Այն ինչ ձեր ընտիր տաղանդներին հէնց այս
բանն է պակաս. մշակութեան բացակայու-
թիւնը: Ես որոշել եմ, տիկիններ և պարոն-
ներ, օգնութեան հասնել ձեզ և իմ բոլոր
ոլժերս նուիրել այս գեղեցիկ գործին: Յայտ-
նում եմ ձեզ, որ ես պատրաստ եմ, եթէ
դուք էլ կցանկաք—ճարտարախօսութեան և
դրամատիքական արուեստի կուրսեր բանալ...

Մոդէստին մինչեւ անգամ թոյլ չտուին,
որ իւր առաջարկութիւնը պարզէ և աղաղա-
կեցին «բրաւօ»: Այդ միտքը զարմանալի կեր-
պով սիրողների ժողովարանի բոլոր անդամ-
ների սրտովն էր: Մոդէստի այն խօսքերը,
թէ ժողովարանում պատուական տաղանդներ
գոյսւթիւն ունին, ամեն մէկը իւր վերալ ըն-
դունեց, և ոչ ոք ի հարկէ չէր ցանկանում,
որ իւր ընտիր տաղանդը անհետ կորչի:

Ոչ մէկի մտքովն անգամ չանցաւ զար-
մանք լայտնել, թէ ինչպէս Մոդէստը, որ
չորս ամենաշական բաղաձայները արտասա-
նելու շնորհ չունէր, ճարտարախօսութիւն

պիտի աւանդէր: Միևնունը չէ: Թող մէկը մէ-
որեւէ բան դաստանդէ, որ մի հիմք լինէ
ուրեւէ մանգալու և ինչպէս և իցէ անցկաց-
նելու ոչ ոքին և ոչ մի բանի պիտանի չեղող
ժամանակը:


Մոդէստի կուրսերին ոչ թէ միտլն ամ-
բողջ ժողովարանն էր յաճախում, այլ գըտ-
նուեցան նաև կողմնակի ցանկացողներ: Նտ-
շատ համեստ վարձ նշանակեց. վճարողները
չէին նկատում անգամ թէ վճարում են: Նո-
ւան էլ շատ քիչ էր արդէն պէտք. մի կերպ
կերակրուէր ու հագնուէր:

Այդ ժամանակից ամեն տարի սեղոնի
սկզբին տեղական լրագրում առաջին երեսի
վերալ երեսում էր մի յայտարարութիւն, թէ
«Ճարտարախօսութեան և դրամատիքական ա-
րուեստի պրօֆէսոր Մոդէստ Դեմենտեվիչ
Սլոեվը, այս ինչ սեպտեմբերից, անցեալ տա-
րիների նման, նորոգում է ցանկացողների հա-
մար իւր սովորական կուրսերը»:

Մոդէստեան այս որոշման հետևանքները
անթիւ էին և անչափ բարեբեր: Նոցանից
գլխաւորը այն էր, որ Մոդէստը այժմ արդէն
մշտապէս կուշտ էր և հագնուած: Բայց կա-
յին և ուրիշները, օրինակ, նո այլ ևս չէր
աշխատում ուռս թատրոնների բէպէրտուարը

Հարստացնել իւր հեղինակութիւններով, իսկ
այս պարզապէս աշխատանք էր թէ նորա և
թէ արուեստի համար. նահանգական Կօզօ-
դուի քաղաքում, որ գտնվում էր որևէ մտա-
ւոր կենդրոնից շատ հեռու, կազմակերպուեց
սեպհական ճեմարանի պէս մի բան, և դեռ
պրօֆէսօրով։ Ամենայն հաւանականութեամբ
կալին և ուրիշ, ոչ պակաս բարեբեր հետե-
ւանքներ, բայց մենք նոցա մասին ոչինչ ըր-
գիտենք։

Եւ այս ամենը տեղի ունեցաւ միմիայն այն հանգամանքի շնորհիւ, որ Մօդէստ Ալոեվը, որ լաւ մարդ էր չնչին թերութիւններով, պէտք է ինչ էլ որ լինէր փաստակէր մի կտոր հաց:



- | | | | |
|-----|--|-----|------|
| 19. | Էրբարդ ոսկի, առակ Լակիվլիք թ. տպ. 1893 | . | — 10 |
| 20. | Թօրինածն (Հրատ. Թիֆլ. տպագը. Ընկերութ.) | . | — 60 |
| 21. | Զէսոէլսոնի Ժառանջը, պատկիրազարդ, 1882. | 1 | — |
| 22. | Ակաէտ. տ. Սիխօէլմիթ. 1885 (պատուած). | . | — 50 |
| 23. | Եան Լընստ Սմօհեար. ն. Եանչուկի, 1885 (ազ.) | . | — 20 |
| 24. | Սրծովի մասամբոննը, պրօֆ. Մ. Բողդան. 1892. | — 5 | |
| 25. | Գիլդի սուրբը, Սիեասոպօլ Հէխի, 1892 | . | — 10 |
| 26. | Կեանքի զարոցը, Գիկէլնսի, 1892 | . | — 1 |
| 27. | Դէպի Սթէնք, Հ. Անկէկէի 1896 | . | — 15 |
| 28. | Մի կտոր հաց, Պոտապէնկօփ 1896 | . | — 10 |
| 29. | Թրուրդ, Օ. Երանելիք | . | — 10 |
| 30. | Մատուիփ աւերակներում, Օ. Երանէլիք | . | — 5 |
| 31. | Կալս | . | — 5 |

գ. Հրատարակութիւններ

- | | | | | | | | | |
|--------|------------------|---------------------|-------------|---------------|----------|------|------|----|
| 32. | Ե. Յարութիւնեան, | Հայոց զիրը | 1893. | . | . | 1 | 50 | |
| 33. | Իշխան. | Խելքագիւան, | Տուխա | 1893 | . | . | — 15 | |
| 34. | Թանգարէ, | Էմաէ, | վէպ Թարգմ. | Յ. Լալայեանի. | — 25 | | | |
| 35. | Ալբէր Ալինա, | Քրդի լեռ սն, | 1894 | . | . | — 25 | | |
| 36. | Ճաղարրէկիւանց Յ. | Հայոց լեզու ա. | ա. | 1894 | . | — 30 | | |
| 37. | Խրիմեան | Հայրիկի, | Փամանակ | 1895 | . | . | — 16 | |
| 38. | Սպիրիտ, | Ալճարած Ռօնի թ. | Կ. | Յարութիւն. | 1885 | — 15 | | |
| 39. | Բակ. | (Բարգն վ.) | Կիլիկիա | 1896. | . | . | — 15 | |
| 40. | Պէտալոցցի, | Լինհարդ և Գիրարուց. | 1896 | . | 1 | 50 | | |
| 41. | Մելքիսեդէկ | արքեպ. | Մուրանահան, | Պետրոս | | | | |
| | | | Շանչեան | պատկերով, | 1897 | . | — 50 | |
| 42. | Թ. Ա. | Խոճարարուհի, | բ. | տու. | Ճոխացրած | . | — 50 | |
| 43—54. | Լուժայ, | զրական Հանգէս | 1896—1901 | ամեն | | | | |
| | | մի զիրքը արքէ | . | . | . | . | 2 — | |
| 55. | Յ. | Պալոննեան, | Խիծաղ, | պատկերով, | 1899. | . | 1 | 25 |
| 56. | » | Արքէլ, | ատամիաք. | կատակ. | 1901 | — 50 | | |
| 57. | » | Քաջաքավար. | վասանելը, | 1901. | — 75 | | | |
| 58. | Ի. | Յարութիւնեան, | Խակիսանսոս | Պալատանեան, | — 25 | | | |
| 59. | Ն. | Էլ-Կարապահտեան, | Խաւառուր | Որովհեան | . | — 60 | | |

«Ազատին գոյացրած»



NL0316626

12. 934

60. Ե. Յարութիւնեան, Աշոկերտի լուշատեարը . . . — 30
61. Զգացոմների աջսարհ. — 30
62. Յարութիւն Թումանեան, Մելիք Էւսուփ. — 20
63. Մ. Եօկուփի, Արացովը, Թարգմ. Խ. Յարութ. — 20
64. 1901 Ա. Նջմիածնի Ժ. Պարագարձը — 25
65. Եր. Շահաղիզ, Մկրտիչ Հմին — 60
66. Կարալինկօ, Առյ Երամիշտը թարգմ. Մուշէ կող. — 60
67. Զորբորդ Կարու հայ Եկեղեցին. — 25
68. Եր. Շահաղիզ, Նորշամիկինեանի ո. խոչ վանքը — 40
69. Ե. Յարութիւնեան, Կմ օրագիրը. — 25
70. Կրիմեան Հալբիկի, Գրախոփ Ընտանիք — 60
71. Սիրաք և Սամուել — 50
72. Դերսէս Մհճ — 25
73. Գ. Խաչկոնց, Հալոց կըօն. բանաստեղծութիւնը. — 60
74. Ե. Յարութիւնեան, Կին վիպագիր, Ե. Սպիրի — 15
75. Ա. Աղանեանց, (թարգմ.) Ակ հացեր. — 5
76. Լումալ. Երկամսեալ հմտէս 1902. տարեկան 6 ռ.

Մամուլի տակ

77. Դիման Հալոց պատմութեան, զիրք Ե. — 30
78. զիրք 2. — 30
79. Երկման Շատրվանի Անտառապետ Յրեղերիկ. Թարգ. Գիտ ա. քահ. Աղանեանի. — 30
80. Գ. Իզ. Սրուանձտեանի Երկերը. — 30
81. Հայ Պրչագիրներ. Գ. ա. ք. Ա. — 30

Գին է 10 կողէն

82. 1. 1901 Արագածոտն պահանձնական — 30
83. 1. 1901 Արագածոտն պահանձնական — 30
84. 1. 1901 Արագածոտն պահանձնական — 30
85. 1. 1901 Արագածոտն պահանձնական — 30
86. 1. 1901 Արագածոտն պահանձնական — 30
87. 1. 1901 Արագածոտն պահանձնական — 30
88. 1. Անձնագրանք առանձնավորություն — 30
89. 1. Անձնագրանք պահանձնական — 30